սարակող մի խաչ, թեւերի եւ պորտի վերայ մի մի գնդակով, որ հնագոյն ձեւակերպութիւններից մէկն է, մինչեւ Դ. դար հասնող հնութեամբ (Պատկ. 84)։ Մի երրորդ պատուանդանի (Պատկեր 85) երկու ֆիգուրները, հաւանօրէն, այր եւ կին, նընջեցեալներ են, որոնք մի ձեռքը իրար վերայ են դրել, մէկը աջ, միւսը ձախ, իսկ միւսները վեր բարձրացրել, որպէս նշան պաշտաման։ Ուշադրութեան արժանի են վաղ բիւզանդական հագուստները, որոնց նմանը տեսանք եւ Պատկ. 66 կոթողի վերայ։ Նոյն պատուանդանի միւս երեսի երեք ֆիգուրները թւում է մեզ հրեշտակը, որ ձեռքը բարձրացրած յայտնում է իւղաբեր կանանց (Պատկ. 86) Քրիստոսի յարութիւնը։

Զմոռանանք յիշել, որ Թալինում կան ուրիշ մանր բեկորներ եւս կոթողների կամ խաչերի, ժամանակակից միւսներին. Պատկ. 87–բորդի նմանները տեսանք արդէն, 88, 89 հելլենիստական ակնյայտնի դրոշմով եւ 90 հաւասարակող խաչեր։

Թ.

Թալինում չեն մնացած պատուանդանի վերայ հաստատուն կոթողներ, բայց այդպիսիները չեն պակասում այլ վայրերում. մենք կարող ենք երկու այդպիսին բաղարովին իրարից հեռու վայրերից յիշել, ինչպէս Հաւիճի (Պատկ. 91, 92, 93) եւ Ծառայիշէնի (Պատկ. 19) կոթողները։ Հաւիճի հնագոյն պատմութիւնը մեզ յայտնի չէ, ներկայ տաճարը Զաքարէ եւ Իւանէ սպասալարների ժամանակի գործ է, այսինքն ԺԳ. դարի առաջին քառորդի. այդ ժամանակից էլ ունինք արձանագրութիւններ եւ ձեռագրական արժէքաւոր մնացորդներ,* բայց չուրջը եղած մնացորդներից դատելով, նա

Պատկ. 90

մէկն է մեր հնագոյն սրբավայրերից։ Այդպիսիներից է հետեւեալ արձանը իւր հետաքրքրական քանդակներով եւ ներքեւի մասի, պատուանդանի՝ պահպանութեամբ։ Արձանի վերեւի մասը պակասաւոր է, որովհետեւ նկատելի է փորուածքը, ուր հաստատուած էր կորած մասը։ Արձանի առաջին երեսը ամենից անաղարտ մնացած մասն է.

---

*Ալիշան. Շիրակ 15 եւ շար.։ Աբասայ որդի Գրիգոր վարդապետի առաջնորդութեան ժամանակ ՈԿԸ=1219 թուին գրրուած է Էջմ.–ի No. 1382 Ձեռագիրը։ Տես մեր Խաղբակեանք Ա. հատոր. եր. 165։